



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հուլիսի 2024 թվականի N 1167 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1986-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի շրջանակում անցկացված նախատրակավորման ընթացակարգի արդյունքում նախատրակավորված մասնակիցների ցանկը հաստատելու, մրցույթի ընթացակարգի մասնակցության հայտերի ներկայացման հրավերին հավանություն տալու և մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 1986-Ն որոշման 2-րդ կետով հավանության արժանացած N 2 հավելվածի 9.6-րդ ենթաբաժնում «Հայաստանում՝ Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեն համայնքների միջև «ԱՅԳ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման մասին կառավարության աջակցության համաձայնագրում (Նախագիծ)» (այսուհետ՝ համաձայնագիր) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին հոդվածի 1-ին կետի 1.3-րդ ենթակետում «Հետաձգող Պայմանների Վերջնաժամկետ» սահմանման մեջ «2023 թվականի դեկտեմբերի 25-ը» բառերը փոխարինել «2025 թվականի դեկտեմբերի 1-ը» բառերով, անգլերեն տարբերակում՝ «the date that is 180 Days after the Signing Date» բառերը՝ «1 December 2025» բառերով.

2) 1-ին հոդվածի 1-ին կետի 1.3-րդ ենթակետում «Շինարարության Մեկնարկի Ամսաթիվը» սահմանման մեջ «Հետաձգող Պայմանների Վերջնաժամկետից [30] Օր անց ընկնող ամսաթիվը» բառերը փոխարինել «2025 թվականի դեկտեմբերի 1-ը» բառերով, անգլերեն տարբերակում՝ «the date that is [30] Days after the Conditions Precedent Deadline;» բառերը՝ «1 December 2025» բառերով.

3) 1-ին հոդվածի 1-ին կետի 1.3-րդ ենթակետում «Ֆինանսավորման Ամփոփման Վերջնաժամկետ» սահմանման մեջ «2023 թվականի դեկտեմբերի 25-ը» բառերը փոխարինել «2025 թվականի դեկտեմբերի 1-ը» բառերով, անգլերեն տարբերակում՝ «the date that is [545] Days after the Signing Date;» բառերը՝ «1 December 2025» բառերով.

4) 1-ին հոդվածի 1-ին կետի 1.3-րդ ենթակետում «Հողամասի Փոխանցման Պայմանագիր» նշանակում է հողամասի փոխանցման մասին պայմանագիրը, որով Ծրագրի Տարածքի նկատմամբ սեփականության իրավունքը Սեփականատիրոջ կողմից փոխանցվում է Կառուցապատողին.» բառերը փոխարինել «Հողամասի Կառուցապատման Իրավունքի Տրամադրման Պայմանագիր» նշանակում է հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիրը, որով Սեփականատիրոջ կողմից Կառուցապատողին է փոխանցվում բացառապես Ծրագրի իրականացման՝ Կայանի կառուցման և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության նպատակով, հողամասի նպատակային նշանակությանը համապատասխան Ծրագրի Տարածքում կառուցապատում իրականացնելու, Ծրագրի Տարածքը տիրապետելու և օգտագործելու իրավունքը.» բառերով, անգլերեն տարբերակում՝ «“Land Transfer Agreement” means the land transfer agreement to be signed under which ownership of the Project Site shall be transferred by the Owner to the Developer;» բառերը՝ «“Land Construction Rights Agreement” means the

agreement on granting of construction rights to a land plot, whereby the Owner transfers to the Developer the right to undertake construction on the Project Site, the right to possess and use the Project Site, exclusively for the purpose of the Project implementation, that is, the construction of the Plant and the production of electrical energy (capacity) in line with the designated purpose of the land plot;» բառերով.

5) 2-րդ հոդվածի 2-րդ կետի 2.1-ին ենթակետում «Ծրագրի Տարածքը սեփականության իրավունքով ձեռք բերելու» բառերը փոխարինել «ապահովում է, որ Սեփականատերը շնորհի Ծրագրի Տարածքում կառուցապատում իրականացնելու, Ծրագրի Տարածքը տիրապետելու» բառերով, անգլերեն տարբերակում՝ «to own» բառերը՝ «ensures that the Owner grants a right to implement construction on the Project Site, to possess» բառերով.

6) 2-րդ հոդվածի 2-րդ կետի 2.3-րդ ենթակետը «(a) Ժամկետը» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ կառուցապատման իրավունքով տրամադրված պայմանագրի)» բառերով, անգլերեն տարբերակում՝ «(a) The Term» բառերից հետո լրացնել «(including the contract granted with the right of development)» բառերով.

7) 3-րդ հոդվածի 3.1.(c) կետի (i) ենթակետի (A) պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«(A) Հողամասի Կառուցապատման Իրավունքի Տրամադրման Պայմանագիրը», անգլերեն տարբերակում՝ «(A) Land Construction Rights Agreement;».

8) 5-րդ հոդվածի 5.1-ին կետի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ծրագրի Տարածքի Փոխանցում», անգլերեն տարբերակում՝ «Transfer of Project Site».

9) 5-րդ հոդվածի 5.1.(a) կետի (i) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«(i) ապահովի (առանց Ուղղակի Ծախսեր կրելու), որ Սեփականատերը կնքի Հողամասի Կառուցապատման Իրավունքի Տրամադրման Պայմանագիրը և Կառուցապատողին կառուցապատման իրավունքով տրամադրի Ծրագրի Տարածքը՝

ցանկացած ծանրաբեռնումից ազատ վիճակում, որպես Ֆինանսավորման Անվտոման Հետաձգող Պայման՝ համաձայն 3.1.(c) Հոդվածի, և Ծրագրի Տարածքը վավեր և պարտավորեցնող կերպով համապատասխան նպատակային նշանակությամբ (էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր) Կառուցապատողին կառուցապատման իրավունքով տրամադրելն ապահովելու համար անհրաժեշտ լինելու դեպքում՝ ապահովի Կառավարության կողմից համապատասխան որոշման ընդունումը, և», անգլերեն տարբերակում՝

«(i) procure (without incurring Direct Costs) that the Owner enters into the Land Construction Rights Agreement and grants to the Developer construction rights to the Project Site free and clear of all encumbrances, as a Condition Precedent to the Financial Close in accordance with Article 3.1.(c), and if required for ensuring the valid and binding transfer of the construction rights to the Project Site to the Developer as a land of appropriate designated purpose (energy, transport, communication, utility infrastructure land), procure the adoption of a Government resolution to that effect; and»,

10) 10-րդ հոդվածի 10.1.(b) կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ (iii) ենթակետով.

«(iii) Առանց սահմանափակելու (i) Կառուցապատողի՝ Մրցութային Սակագնի ճշգրտում կատարելու հայտով ՀԾԿՀ-ին դիմելու իրավունքը և ՀԾԿՀ-ի, Սակագնային Պլանի համաձայն, Սակագների ցանկացած ճշգրտում կատարելու իրավունքն ու պարտավորությունը, (ii) Պայմանագրի 10.1.(b)(i) և 10.1.(b)(ii) Հոդվածների գործողությունը և (iii) Անբարենպաստ Պայմանի Դեպքի և Օրենքի Փոփոխության համար փոխհատուցմանը վերաբերող՝ Պայմանագրի դրույթները՝ Կառուցապատողը պարտավորվում է Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում Կառավարությանը Մրցութային Սակագնի որևէ այլ բարձրացման հայտով չդիմել: Ներկայացված այդպիսի որևէ հայտ չի դիտարկվելու և ենթակա է մերժման Կառավարության կողմից», անգլերեն տարբերակում՝

«(iii) Without prejudice to (i) the Developer's right to request or seek an adjustment in the Bid Tariff from PSRC and PSRC's right and obligation to adjust the Tariffs in accordance with the Tariff Schedule, (ii) Articles 10.1.(b)(i) and 10.1.(b)(ii) of the

Agreement, and (iii) the provisions of the Agreement relating to compensation for an Adverse Condition Event and a Change in Law, the Developer undertakes not to request or seek any other increase in the Bid Tariff during the effective term of the Agreement. Any such application submitted will not be considered and shall be rejected by the Government.».

11) 12-րդ հոդվածի 12.2. (b) կետի (ii) ենթակետից հանել «և ցանկացած Հողամասի Փոխանցման Պայմանագրով» բառերը,

12) 12-րդ հոդվածի 12.2.(b) կետի (iii) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«(iii) Կառավարությունը սույն Պայմանագրի և Լիցենզիայի առնչությամբ Ֆինանսավորման Կողմերի հետ Ծրագրի կապակցությամբ կնքում է և ապահովում է, որ Սեփականատերը Հողամասի Կառուցապատման Իրավունքի Տրամադրման Պայմանագրի առնչությամբ Ֆինանսավորման Կողմերի հետ կնքի ուղղակի պայմանագիր («Ուղղակի Պայմանագիր»)՝ միջազգային ծրագրային ֆինանսավորմամբ Ծրագրին համանման էներգետիկ ծրագրերում ընդունված պրակտիկան արտացոլող ձևով, համաձայն որի Ֆինանսավորման Կողմերն իրավունք կունենան ստանալու ծանուցում սույն Պայմանագրով և համապատասխանաբար որևէ Ծրագրի Փաստաթղթով ցանկացած սպառնացող դադարեցման մասին, և Ֆինանսավորման Կողմերը կամ նրանց կողմից նշանակված անձը հնարավորություն կունենա միջամտելու և վերացնելու ցանկացած խախտում, որը հիմք է այդպիսի դադարեցման համար, և/կամ նշանակելու հավանության արժանացած փոխարինող կառուցապատողի (համաձայն Ուղղակի Պայմանագրով նախատեսվելիք հաստատման գործընթացի (այդ թվում՝ Կառավարության հաստատման)՝ սույն Պայմանագրով կամ, եթե կիրառելի է, որևէ Ծրագրի Փաստաթղթով Կառուցապատողի իրավունքների ու պարտավորությունների համար պատասխանատվություն ստանձնելու նպատակով՝ Կիրառելի Օրենքի պահանջների պահպանման պայմանով:», անգլերեն տարբերակում՝

«(iii) the Government will enter into a direct agreement in respect of this Agreement and the License with the Financing Parties in relation to the Project and will

procure that the Owner enters into a direct agreement in respect of the Land Construction Rights Agreement with the Financing Parties (the “Direct Agreement”), in a form reflective of prevalent practice in international project financed power projects similar to the Project, pursuant to which the Financing Parties will have the right to be notified of any impending termination of this Agreement, and as applicable, a Project Document, and the Financing Parties or their agent will have the right to step in and remedy any default that has given rise to such termination, and/or to nominate an approved substitute (in accordance with an approval process to be set out in the Direct Agreement (and including Government approval)) to assume responsibility for the Developer's rights and obligations pursuant to this Agreement, or any Project Document, as applicable, subject to Applicable Laws.».

13) 13-րդ հոդվածի 13.3.(a) կետում «սեփականության իրավունք ձեռք բերելուց հետո» բառերը փոխարինել «կառուցապատման իրավունք ձեռք բերելուց հետո» բառերով, իսկ «Հողամասի Փոխանցման Պայմանագրի համաձայն, Ծրագրի Տարածքի փոխանցումը Կառուցապատողին» բառերը փոխարինել «Հողամասի Կառուցապատման Իրավունքի Տրամադրման Պայմանագրի համաձայն, Ծրագրի Տարածքի տրամադրումը Կառուցապատողին» բառերով, անգլերեն տարբերակում՝ «after taking ownership of» բառերը՝ «after being granted construction rights to» բառերով, «the transfer of the Project Site to the Developer pursuant to the Land Transfer Agreement» բառերը՝ «the provision of the Project Site to the Developer pursuant to the Land Construction Rights Agreement» բառերով.

14) 17-րդ հոդվածի 17.2.(b) կետից հանել «սեփականության իրավունքը և դրա» բառերը, իսկ «կամ Կառավարությանը, ինչպես որ կորոշվի Կառավարության կողմից» բառերը փոխարինել «և դադարեցնել Ծրագրի Տարածքի նկատմամբ օգտագործման և այլ իրավունքները» բառերով, անգլերեն տարբերակում՝ հանել «ownership and» բառերը, իսկ «or the Government, as decided by the Government» բառերը փոխարինել «and to terminate all the use rights and other rights towards the Project Site» բառերով.

15) 17-րդ հոդվածի 17.3.(b) կետից հանել «սեփականության իրավունքը և դրա» բառերը, իսկ «կամ Կառավարությանը, ինչպես որ կորոշվի Կառավարության կողմից» բառերը փոխարինել «և դադարեցնել Ծրագրի Տարածքի նկատմամբ օգտագործման և այլ իրավունքները» բառերով, անգլերեն տարբերակում հանել «ownership and» բառերը, իսկ «or the Government, as decided by the Government» բառերը փոխարինել «and to terminate all the use rights and other rights towards the Project Site» բառերով.

16) 17-րդ հոդվածի 17.4.(b) կետը «Ծրագրի Տարածքի» բառերից հետո լրացնել «նկատմամբ տիրապետման և օգտագործման իրավունքը» բառերով, անգլերեն տարբերակում՝ «delayed in transferring ownership to the Project Site or the Plant» բառերը փոխարինել «delayed in transferring possession and use rights of the Project Site or ownership of the Plant» բառերով.

17) 17-րդ հոդվածի 17.6-րդ կետից հանել «սեփականության իրավունքը և դրա» բառերը, իսկ «կամ Կառավարությանը, ինչպես որ կորոշվի Կառավարության կողմից» բառերը փոխարինել «և դադարեցնել Ծրագրի Տարածքի նկատմամբ օգտագործման և այլ իրավունքները» բառերով, անգլերեն տարբերակում հանել «ownership and» բառերը, իսկ «or the Government, as decided by the Government» բառերը փոխարինել «and to terminate all the use rights and other rights towards the Project Site» բառերով.

18) N 2 հավելվածի 2-րդ կետի 2.2-րդ ենթակետում «Հողամասի Փոխանցման Պայմանագիր» բառերը փոխարինել «Հողամասի Կառուցապատման Իրավունքի Տրամադրման Պայմանագիր» բառերով, անգլերեն տարբերակում՝ «Land Transfer Agreement» բառերը՝ «Land Construction Rights Agreement» բառերով.

19) N 2 հավելվածի 2-րդ կետի 2.3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական կարծիքը, որի ձևն ու բովանդակությունը բավարար են Ֆինանսավորման Կողմերի համար, և», անգլերեն տարբերակում՝

«2.3. a legal opinion from the Ministry of Justice of the Republic of Armenia, in form and substance satisfactory to the Financing Parties; and».

20) N 3 հավելվածի 1-ին կետի (a) ենթակետում «[«Projected CAPEX, total»]» բառերը փոխարինել «750, 000» բառերով, անգլերեն տարբերակում՝ «[“Projected CAPEX, total”]» բառերը՝ «750, 000» բառերով:

2. Կսքման ենթակա՝ համաձայնագիրը փոփոխող լրացուցիչ համաձայնագիրը պետք է նախատեսի սույն որոշման 1-ին կետով նախատեսված դրույթները, ինչպես նաև դրույթներ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կառուցապատողը և Կառավարությունը սույնով հրաժարվում են Համաձայնագիրը փոփոխող համաձայնագրով նախատեսված ժամկետների փոփոխությամբ պայմանավորված՝ Համաձայնագրի 13-րդ և 17-րդ Հոդվածներով սահմանված իրենց իրավունքների իրացումից՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1986-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին լիազորելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի [\_\_]-ի N [\_\_]-Ն որոշումն ուժի մեջ մտնելու պահին ընկած ժամանակահատվածի համար:

Սույն փոփոխող համաձայնագիրը, այն ստորագրելու փաստը և դրանից բխող որևէ գործողության իրականացումը Հայաստանի Հանրապետության իրավունքի և կիրառելի միջազգային իրավունքի տեսանկյունից չպետք է մեկնաբանվի որպես Կառավարության, վերջինիս ցանկացած մարմնի կամ գերատեսչության կամ պաշտոնատար անձի կողմից որևէ փաստական հանգամանքի ընդունում կամ հերքում կամ որևէ պատասխանատվության ստանձնում:», անգլերեն տարբերակում՝

«The Developer and the Government hereby waive any rights to exercise their entitlements under Articles 13 and 17 of the Agreement, conditioned by the modifications of the time periods set forth in this amendment agreement, for the period between 25 December 2023 and the date of entry into force of the Government of the Republic of Armenia Resolution No. ---N, dated ---, 2024 on Amending and Supplementing



Republic of Armenia Government Resolution No. 1986-N of December 3, 2020, and authorizing the Minister of Economy of the Republic of Armenia.

This amendment agreement, as well as the fact of signing it and then performing any action within the framework thereto, in terms of the Armenian law and the applicable international law, should not be interpreted as acceptance or refutation of any factual circumstance or any responsibility by the Government, any of its bodies or institutions or public officials.»:

3. Լիազորել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին Հայաստանի Հանրապետության կառավարության անունից կնքել համաձայնագրում՝ սույն որոշմամբ կատարված փոփոխությունների մասին լրացուցիչ համաձայնագիր, որը պետք է պարունակի սույն որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթները:

4. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին տրամադրել սույն որոշման 1-ին կետի 18-րդ ենթակետում նշված իրավաբանական կարծիքը:

5. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ ապահովել սույն որոշման համաձայն «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից համաձայնագրով սահմանված՝ Հողամասի Կառուցապատման Իրավունքի Տրամադրման Պայմանագրի կնքումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան